

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԵԿԱՆ ՊԵՂՆԵԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՍԵՏԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ

ՄԵՆ ԼԵՂՈՎ

Առաջին երեսում տողը (petite) 6 շաբաթ
Վերջին " " " 3 շաբաթ

ԲԱՃԱՆՈՐԴԱԿՈՒՆ Է

Թաղիցում ամիսը 1,50
Դառնալուցում " 2 ղո.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ
8 ՇԱԶԻ

Հասցեն՝ Redaction „Archalousse“ Tauris (Perse)

اداره روزنامه «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն «Գաղթականական Բերթ» Հայկ Իսախանեանին

Բ. ՏԱՐԻ

№ 17 ՀԻՆԳՇԱԲԹԻ 5 (18) ՅՈՒԼԻՍ 1919 Թ.

Բ. ՏԱՐԻ

Ա. Զ. Դ.

Ուղարկելով անդորրագրերը, խնդրում ենք մեր յարգելի բաժանորդներից իրենց բաժանորդագները յանձնել ցրիչին կամ ինձ. «Արշալոյս»-ի ֆինանսական Յանձնախմբի կողմից
Առն Ս. Բաղդասարեան.

ՍԵՏԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ
VI-Ի ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ

III

Ատրպ. Հ. Յ. Գաղթականական թեմի VI-րդ շրջանային ժողովի օրակարգը կարգադրիս՝ ամենից առաջ մեր աչքին են զարնում հենց առաջին երեք կետերը՝ I շրջանների վերականգնություն, II Գաղթականական խնդիր և III Գաղթականական վերաշինություն։ Այդ երեք կետերը կարգադրիս մենք զգույս ենք, որ դուրս կազմում են միմիանց անմիջական շարունակություն և որ այդ երեք խնդիրները շարունակաբար են միմիանց առաջին սերտորեն։

Գաղթը բաղադրական պայմանների վերջին երկու տարիների ծնունդն է (նախորդ դուրսերում մենք համառոտակի չէինք ենք այդ բաղադր. պայմաններն ու պատճառները), այժմ, գրովի և փոփոխություն և քաղաքական միջնորդների բիշ թէ շատ խաղաղություն, մենք մտածում ենք մոտակայ ներգաղթի և զրանից անմիջապես կախում ունեցող աւեր գաւառի վերաշինություն, ապա մեր նախկին կազմակերպությունների վերականգնություն և նոր կազմակերպություններ հիմնելու մասին։

Վաղ թէ ուշ մեր գաղթականությունը պիտի վերադառնայ իր ծննդավայրը։ Գաղթականություն մեծագույն տոկոսը կազմում է աշխատաւորները և հետեւապէս վերաշինություն համար նա չպիտի ունենայ բաւարար նիւթական միջոցներ։ ուստի պէտք է այդ վերաշինությունը կատարել հա-

մայական միջոցներով։ Ազգային պատշաճ և իրաւասու մարմինները պիտի հոգան առաջին հերթին՝ քանակաւորվող վերաշինության և գիւղատնտեսական գործիքների հայթայթման գործը՝ վերականգնելու գաւառի աւերած տնտեսությունը։ Իրա հետ միասին՝ ցոյց տալու բարոյական օգնություն (իրաւաբանական, բժշկա-սանիտարական) և ապա աշխատել իրական-կուլտուրական հիմնարկությունները ամենակարճ ժամանակամիջոցում վերաբացելու։

Գաւառի վերածննդի վերոյիշեալ բոլոր գործերում Հ. Յ. Գաղթականությունը պէտք է ունենայ իւր գործօն մասնակցությունն ու գերը, ստեղծելիք գանազան մարմինների միջոցով։ գործը դնելու կանոնաւոր հիմունքների վրայ և ծառայեցնելու իր բուն իսկ ներպատակին՝ անվերջ և անշղթ։

Հ. Յ. Գաղթականությունը զթոշի տակ եղած նախկին բոլոր լուծւած կազմակերպությունները պէտք է վերակազմել, վերակազմել կազմակերպական աշխատանքները գիւղացիական և արհեստակցական միութիւնների միջոցով՝ քաղաքական խմբեր թողնելով միայն ազատ պրոֆեսիայի անձանց՝ հիմք ունենալով յեղափոխական պրոպագանդան և մեր երկրի քաղաքական ու տնտեսական ուրոյն պայմանները՝ պաշտպանելով, որպէս սոցիալիստական կուսակցություն, առանց ողջի խտրութեան աշխատաւոր դեմոկրատիայի քաղաքական և տնտեսական շահերը։

Berta

ՄԵՆԻ ԵՒ ՄԵՐ ԴԵՐԸ

Վերածնւած հայրենիքի գաւառներ ենք մենք։

Գարբով խոշտանգւած, գարբով արեւնի ու կրակի ենթակա մի հայրենիքի գաւառներ, որի վերածնունդը բազմաթիւ կարիքների վրայ է հիմնւած, որ դեռ ևս խախտւած է նրա հիմքն ու թույլ Մի հայրենիք, որ կարօտ է գաւառներ ու փառալուսիք, մի հայրենիք, որ կարօտ է աշխատող ձեռքերի, ահա թէ ինչպիսի հայրենիքի գաւառներ ենք մենք։

Նախորդների ու ներկաների շահերով ստեղծւեց ազատ Հայաստան, իսկ մեզ մնում է այդ հայրենիքը վերաշինել, ծաղկեցնել, չթողնել որ նա կրկին ենթակա լինի օտարի բռնութիւններին, օտարի կոմայականութիւններին, ինչպէս որ էր։ Բազմաթիւ են նրա կարիքները, ու դեռ ևս թաւր ու արեւնաւոր նրա անթիւ վերքերը և այդ կարիքները հոգացող ու վերքերին սպեղանի՝ զննողներ են հայրենասիր, և մենք ենք, որ պէտք է հանդիսանանք այդ ենթակայները, մենք ենք, որ պէտք է շահագրգռւած լինենք մեր հայրենիքի գոյութեան բարձր ու ցածր լինելու խնդրում, որովհետեւ մենք ժառանգեցինք այն։

Հիշող չէր մեր հայրենիքի ազատագրումը, միջինաւոր դոհերի արեւով է գնւած նա, միշտ արեւն է, որ տւել է նրան կեանք դեռ ևս ապրելու, ալլապէս նա պէտք է արեւնապառ լինէր ու ընկնէր անդառնալիքով, և մեզ վրայ սրբազան պաշտականութիւն է դրոււմ լինել արժանաւոր լիտնորդներ հնարի, լինել գործունեալ սերունդ, պահպանել հնարի արեւն գինը և չթողնել, որ նա նորից ընկնէ, որովհետեւ նրա կանգուն լինելը մեզինք է կախւած և մենք պէտք է կեանք տանք նրան, ստեղծենք նրա համար բարելաւող պայմաններ, որպէսզի նա

օրէջօր աւելի կենսունակութիւն ձեռք բերի ու՝ աւելի ևս ամրանան նրա հիմքերը։ Այդ բոլոր պարտականութիւնները հնարը դրնում են մեզ վրայ՝ նրանք ստեղծեցին, մենք պէտք է պահենք, այս է, որ նոր սերունդը պէտք է գիտակցի, որ պէտք է ընդառաջ գնալ այն բոլոր կարիքներին ու հարթի այն բոլոր խոչընդոտները, որոնց չըզգույթեամբ պէտք է ծաղկի ու ուժ ստանալ մեր հայրենիքը։

Եւ քիչ չէ այսօր հայրենիքում գործող պատանիների թիւը, նրանք շատ են, նրանք գիտակցութիւն ու ճշտապահ կերպով կատարում են իրենց վրայ դրւած պարտականութիւնները, թող նրանք օրինակ դառնան մի սերունդին, թող նրանք լինեն այն առաջնորդները, որոնց լինելից պէտք է դէպի հայրենիք քալի նոր սերունդն ի կատար ածելու իր վրայ դրւած լուրջը։ Թող չմոռանան նաև նոր սերունդին պատկանող օրիորդները, որ իրենք ևս մեծ գործ ունեն կատարելու մանուկ հայրենիքում, որ նրանք էլ պէտք է հանդիսանան հայրենիքի վերքերին սպեղանի՝ զընողներ, ինչպէս և մենք։

Այդ տեսակետից ծնողների վրայ ևս մեծ պարտականութիւն է դրոււմ, նրանք ևս պէտք է խրախուսեն իրենց գաւառների ամեն մի քալը, որ կը կատարւի այդ ուղղութեամբ, նրանք են որ պէտք է հանդիսանան այդ պարտականութիւնը զննողներ իրենց գաւառների վրայ։ Այն ինչ շատ անգամ ընդհակառակն է պատահում, որ դու ամեն մի այդպիսի քալը պախաբակում ու դատապարտում է ծնողներից։

Թող զգան բոլորը, որ ամեն ինչից գերազանց ու բարձր հայրենիքի վերաշինությունն է ու ի մի հաւաքւած, նոր սերունդի դրօշակի լինելից գնան իրենց պարտքը կատարելու։

Այսպէս մտածում ենք, այսպէս էլ անենք, որովհետեւ հնէքը ստեղծեցին, մենք պէտք է պահենք։

Անուո

